



ՄԶ մարդու մի և շունի պատմութիւնը : Երկուսն ևս զիրար կը սիրէին հաւասարապէս, այնպիսի սիրով որ մարդկային բարեկամութեան մէջ չի հանդիպել, քանզի մարդոց մէջ՝ մին է բարեկամ՝ միւսին, երանի եթէ միւսն նորա թշնամին չլինի, իսկ եթէ լինի՝ ամենալտանազաւոր թշնամի է որոյ ձեռքէն ազատիլ չէ կարելի : Թշնամի այնպէս որ զձեզ պիտի սպանանէ դանդաղ հոգինիդ առնելէն վերջը :

Մարդը ոչ մեծ էր հասակաւ և ոչ փոքր, աւելի վաստօժ քան թէ գէր, բաւական տգեղ . նորա դէմքը տարօրինակ էր . ոչ մի ցեղի չէր նմանել, ոչ թխազոյն, ոչ խարտեշազոյն և ոչ այլ շագանակազոյն :

Միւս բարեկամն ևս դիպուածական հանդիպողութենէ մի աշխարհ եկած էր : Նորա հայրը ու մայրը՝ երկուսն ևս խառնածին լինելով՝ բնաւ մի ցեղի չէին նմանել արդէն, երբ մէկ մէկու հանդիպեցան . — նոցա ձագը երկուսին ևս նման էր, — կարճ ու կիստիկն կանգուն ականջներովը նման էր նա քիչ մի Նոր Երկրի շներուն, կարճ ու շէկ մազերովը փոքրիկ տափադունչ սոկերուն, երկնցած դունչովը բարակ որսականաց : Թաթերէն մին սպիտակ էր, միւսն էր անգոյն : Այս այն անհասաներէն էր որ վհատեցուցել են զՊիֆոն շանց ցեղերու անուանակարգութիւնը գրելէ՝ ութսուն այլազան շանց տեսակը դասաւորելէն յետոյ :

Երկուսն ևս զիրար սիրեցին . աւելի սիրով կապուեցան տեսնելով որ ոչ ոք նոցա սիրելու էր . քանզի բաց ի իրենց տգեղութիւնէն յետին աստիճանի ազքաս ևս էին : Նոքա սակաւ անգամ կը նախանաշէին, որովհետեւ այդ տատելիքն՝ որով օրն կը սկսի, մուրացկանի համար չէ՝ որք հարկադրուած են հացն կտոր կտոր ճարելու :

Նոքա դիպուածով կը ճաշէին, երբեմն վառ, երբեմն միջակ . ընթրիք ասածդ չէին գիտել . փոխանակ ընթրիքի կը քնանային . — բունը՝ այդ անուշ բարե-

կամը որ մարդուս կեանքը առկախ կը թողու մահու զգացումը ու խիղճը միտք բերելով :

Մարդը ու շունը դրամ չունեցած ատեն, կ'երթային գաղանի տ' Օռսէի գետափը կը պառկէին, հոն նետուած հին մին յարդերու մէջ պլլուած :

\*  
\* \*

Շունին անունն էր Մուսոն, մարդուն անունը Բեռնարդ : Երկու անուանք ևս նոցա վրայ հաւասարապէս յարմար էին՝ այնպէս որ մարդը կարող էր Մուսոն կոչուիլ, շունը՝ Բեռնարդ, ու մարդ այդոր ասելիք չունէր, քանզի նոցա կերպերուն, կեցուածքին ու շարժուածքին մէջ տարբերութիւն չկար :

Բեռնարդ ամեն արհեստի ձեռք կը զարնէր՝ ամենևին արհեստ չդիտնալուն համար . յայտնի է թէ սովորաբար նորա արածները գծնազակ աշխատութիւնք էին որք ամենանուագ վարձատրեալքն են :

Մուսոն ոչինչ չգիտէր անել, իւր աիրով ետևէն կ'երթար ամենուրեք, կը մասնակցէր նորա հացին, ձեռքերը կը լզէր, գիշերները կը տարցնէր, կը մխթարէր ու կը սիրէր :

Չմեռ մի Մուսոն հիւանդացաւ . Բեռնարդ ստիպուեցաւ մինակ թողուլ զնա ամբողջ երկու օր տ' Օռսէի գետափը յարդին վրայ :

Երրորդ օրը այլ յարդ մնացած չէր : Մուսոն կը դողդղար ցրտէն ու ջերմէն, խոնաւ հողին վրայ . Բեռնարդ առաւ տարաւ զնա շնարածի մօտ որպէս զի խնամեն : Բժիշկը շարժութեան մի խնամոց փողը կանխիկ պահանջեց : Բեռնարդ ծախեց իւր ժիլէթը ու երրորդ շապիկը վճարելու համար :

Սակայն Մուսոնին հիւանդութիւնը ծանր էր : Բեռնարդ կուզար ամեն օր այցելութեան իւր շունին ու բոլոր իւր ազատ ժամերը նորա քով կ'անցնէր :

Եկաւ հասաւ զինուորագրութեան ժամանակը . Բեռնարդ հարկադրեցաւ զինուոր երթալ : Չինուորութիւնը նորա համար հաճոյք պիտի լինէր եթէ շունը հետը լինէր . որովհետև զինուորացի գնդին մէջ հաց, անկողին և զգեստ կայ միշտ : Բայց Մուսոն տեղէն շարժիլ չէր կրնար դեռ : Քիչ մի դրամ՝ ճարեց իւր ցնցոտիքը ծախելով ու լալով ճամբայ ելաւ : Գունդը անպագար կը տեղափոխուէր . Բեռնարդի խելքը միտքը իւր շունն էր . պրամ դրամի վրայ գնելով գումար կը հաւաքէր և բժշկին կը զրկէր . անգամ մի, յանձնեց նա իւր փոքրիկ գումարը զինուոր ընկերի մի որ Պարիզ կ'երթար, ընկերը փոխանակ տանելու զայն բժշկին յանձնելու՝ փողը գինի պարձուց ու խմեց :

Սր մի Բեռնարդ նամակ մի ստացաւ . նամակը կը կրէր ամեն այն տեղեաց կնիքն ուրիշ գունայն անցել էր : Տասնհինգ օր առաջ գրուած էր և կենդանաբաժէն կուգար : Սա՛ չէր ստացած Բեռնարդի վերջի զրկած փողը, կ'իմացնէր նորա որ եթէ տասնհինգ օրէն շունին համար պատկանեալ փողն չվճարուէր, շունն՝ որ շատուց 'ի վեր բոլորովին առողջացած էր՝ պէտք էր ծախուիլ :

Բեռնարդ մարմնով գողաց, սիրար ճիլուեցաւ . վազեց գնաց գնդապետին ,

նամակը ձեռքը բռնած . երբ ուզեց խօսիլ , ձայնը կորուսեցաւ , սկսաւ հեծեծել . միայն կրցաւ տիտը նամակը երկնցնել գնդապետին և լայով սկսաւ ասել ու գոչել . « Մուտոն , իմ Մուտոնս , իմ խեղճ Մուտոնս ծախուի՛ » :

Գնդապետը զինքը խև գիսցաւ . բայց այնպէս սրտանց կու լար . այնչափ ճշմարտութիւն կար իւր արտմութեան մէջ և այնպիսի զանուութիւն արտասուաց մէջ , որ գնդապետը զինքը հանդարտեցուց , ապահովցուց ու պատմել տուաւ գործը .

— Գնդապետս , ասաց խօսքը լմնցնելով , Աստուծոյ համար լինի , կ'աղաչեմ թող տուր ինձի որ երթամ , թող տուր որ երթամ իմ Մուտոնս առնեմ բեւրեմ : Թող տուր , կ'աղաչեմ , ապա թէ ոչ առանց հրամանի կ'երթամ : կը փախիմ կ'երթամ . պէտք է որ տեսնեմ Մուտոնին , չեմ ուզել որ նա ծախուի . ո՛հ , Աստուած իմ , Մուտոնս ծախուի՛ :

— Բայց , ասաց գնդապետը , եթէ քեզի հրաման տամ երթալու , ի՞նչպէս պիտի ձամբորդես . գիտես որ այս տեսակ արձակուրդի համար զինուորականաց ճամբու փող չեն տալ :

— Ո՛հ , ես պիտի մտրամ . մերժելու չեն ինձ հացի կտոր մի ու քիչ մի յարկ պառկելու համար : Գնդապետս , իմ բարի գնդապետս , թող տուր որ երթամ :

— Զինուորը պէտք չէ մտրայ . Պարիզ հասնելովդ ի՞նչ պիտի անես . եթէ չկարողանաս վճարել կենդանաբուժին , շունդ աչքիդ առջև իսկ կարող է ծախել :

— Չեմ գիտել թէ ինչ պիտի անեմ , բայց Մուտոնին պիտի ազատեմ , ծախել տալու չեմ . իմ միակ բարեկամն է : Առանց նորա , առանց նորա փայփայանքին , առանց նորա խելօք ու բարեկամական նայուածքին , մինչև հիմա քան անգամ թագաւորական կամօրջէն ինքս ինձի ջուրը նետած կը լինէի : Թող տալու չեմ որ նորա ծախեն . ի՞նչպէս երջանիկ պիտի լինի զիս նորէն տեսնելով . պիտի աղաչեմ բժշկին , ծունկի պիտի գամ առջևը , պիտի սպաննեմ : Նա շուներս պիտի շծախէ . երկորդ որ փողը պիտի վճարեմ կամաց կամաց : Էթէ Մտանիւլա չգողնար գրամն , Մուտոնին թոշակը վճարուած կը լինէր . դահեկան դահեկանի վրայ զնելով պիտի հաւայեմ ու բժշկին պիտի հատուցանեմ : Առաջուան վարքովս պիտի կենամ . ես գինետուն կամ ուրիշ տեղեր չեմ երթալ . գնդապետս , թող տուր որ երթամ :

Գնդապետն հանեց երեք ոսկի տուաւ ասելով

— Գնա գտիր Մուտոնին :

Բեռնարդ իւր գնդապետին ձեռքը կը համբուրէր , կ'ուզէր ոտքն ևս համբուրել . գնդապետը զրկեց զինքը իւր ճանապարհադիրը առնելու :

Բեռնարդ երկու հարիւր փարսախ տեղ ճամբայ պիտի քալէր . ուրախ ճամբայ ելաւ իւր արձակուրդի թուղթը թիթեղեայ տուփի մէջ դրած , իսկ երեք ոսկին զգուշութեամբ կապած ու փաթթած զրպանին մէջ : Քաջապէս կը քալէր , յոգնածութեան , անձրեկն , քամիին անուշադիր , մտածելով որ զՄուտոն իւր հին ընկերը պիտի տեսնէր կրկին :

— Խեղճ Մուտոն , ասաց ինք իրեն , հիմա ի՞նչպէս երջանիկ պիտի լինինք ,

հիմա ի՛նչպէս տաք տաք պիտի պահկինք , ամէն օր կերակուր պիտի ունենանք : Արձակ ժամանակ շատ պիտի ունենամ քու վրագ հոգ տանելու , զքեզ լուանալու և սապոնելու համար . դու գեղեցիկ ու մաքուր պիտի լինիս : Գու հարկադրուելու չես այլ ինձ սպասելու դռներու առջև ինչպէս որ յանձնարարութիւնք կատարած միջոցիս կ'անէիր . ամենքը զքեզ պիտի սիրեն . զինուորները շուն կը սիրեն . դու զինուորանոցին մէջ ազատ ու տէր պիտի լինիս . մինչև անգամ ստորին—ըստ պայք քեզ ոսկորներ պիտի տան կրծելու : Քեզ փայլուն պիտի անեմ գնդապետին առջև հանելէն առաջ . և այն երկար անգործ ժամերուս՝ փոխանակ զինետուն երթալու , քեզի հետ քալելու պիտի երթանք : Գու պիտի զարմանաս զիս գեղեցիկ հագուած և ամեն օր նոյն ժամուն կերակուր կերածս տեսնելով :

Ահա այս մտածութիւնք նորա հոգի կու տային քալելու . քաններորդ օրը Պարիզ հասաւ յոգնած կամ աւելի ուժաթափ : Այնու հանդերձ առանց կանգ առնելու վազեց գնաց կենպանարուժին տունը :

Կենպանարոյժը խիստ զբաղած էր . Բեռնարդին ասին որ սպասէ . նա խընդրեց տեսնել զիւր շունը . ծառան նոյնը չէր ու Բեռնարդին չէր ճանչնալ որով յայտնեց նորա որ առանց բժշկի մասնաւոր հրամանին՝ շնանոցը մարդ մացնել արգիլած էր : — Կը ճանչնամ իմ շունս , անունը Մուսոնն է . ասաց Բեռնարդ . — Ոչ , պատասխանեց ծառան . հոս ամեն շունի անունը պատ է . — Գեղին է շունս , յաւել Բեռնարդ , թաթերուն մէկը ճերմակ . — Ութ հաս կայ՝ որ զեղին են և ես բնա նայած չեմ թէ թաթերը ինչ գունով են :

Բեռնարդ նախատեսելին մէջ կը շրջէր սաստիկ անհամբեր . Մուսոնն հոն էր թերևս , զոնով մի անդին բաժնուած իրմէն . Մուսոնն տխուր ու դժբաղդ . ինչպիսի՛ երջանկութիւն էր զինքը տեսնելն , զինքը համբուրելը . ի՛նչպէս պիտի ցատկէ ու կանչէ : Ես զինքը պիտի առնու՞մ պիտի տանեմ , մէկտեղ պիտի երթանք այլ ևս մէկմէկէ չբաժնուելու համար : Ինչպիսի՛ ուրախութիւն ասկից զուր ելնել Մուսոնով , իմ բարի Մուսոնով :

— Բարեկամ ասաց ծառան , կարող ես ներս մտնել :

Բեռնարդ թափով բժշկին առջև վազեց , հանեց զբալանէն քովը եղած չեղած ոսկի ու կէւը :

— Պարոն , ասաց , Մուսոնին ետևէն եկայ , իմ շունս առնելու եկայ :

Կենպանարոյժը զինքը շնանցաւ . — Չեր շունին անունը Մուսոնն էր . — Այո՛ Պարոն , Մուսոնն է .

— Ո՛ր օրը հոս մտել է . — Շարաթ օր մի , փետրուարի . . . . . 182 . . . .

— նորա նշաններն ի՛նչ են . — Ինքն զեղին , թաթերէն մին ճերմակ . — Ա՛հ այո՛ , այո՛ , Մուսոնն , զեղնագոյն , կարճամազ , ճերմակ թաթով . այդ է այդ , հա՛ . նորա ծախուածը հինգ օր է . թոշակը վճարուած չլինելուն պատճառաւ :

Բեռնարդին քիչ մնաց սիրտը պիտի անցնէր . քանի մի վարկեան լուսթենէ վերջ — ծախուած է , գաչեց . — Այո՛ , հինգ օր առաջ ծախուեցաւ , անվճար մնալուն պատճառաւ . տասներկու ֆրանգ կը պատկանէր , ութ ֆրանգի ծախեցի . դու ինձ չորս ֆրանգ ևս տայիք ես . պէտք է որ այդոր ստացազիր մի

ամա՛մ. — Ո՞ւր է. — Ստացազի՞րը. ան՛ամ ընդունէ՛, առբ փողը. — Ո՞ւր է Մուսոն. — Չեմ գիտել :

Բեռնարդ բռնկի՛ն թե՛կէ՛ն բռնելով՝ գոչեց. — Ելժէ շատեա Մուսոն ուր է, հիմա կը խզգեմ :

— Փողոց Ռեկուսթիէն, կղզի Ս. Լուի. ոչ տան թիւը գիտեմ և ոչ այլ գնողին անունն :

\*  
\* \*

Բեռնարդ վազեց գնաց Ռեկուսթիէն փողոցը, տասն անգամ ամէն կողմ վազվառեց. բայց այն օրը կիրակի լինելով խանութները փակուած էին : Գիշերը անցուց մծտակայ վատ պանդոկի մի մէջ : Առաւօտն արշալուսին Ռեկուսթիէն փողոցին մէջ կը շըջէր, գննելով խանութները, դռներէն ներս մտնելով, դռնապաններուն հարցափորձելով. որք ամարդի կը մերժէին աւելի՝ քան թէ սրոշ պատասխան կուտային : Երկրորդ օրը զամ շինողի մի դրան առջևէն անցած միջոցին, գործաւորը Միգոտ անունը տալով կանչեց : Բեռնարդ երբ լսեց որ շուն մի կը կանչեն, դարձաւ ետեւը նայելու. այդ շունը Մուսոնն էր որ զամ շինողին խանութէն դուրս ելնելով՝ ուրախութենէն սոնալով վազեց եկաւ ցատկեցաւ իւր տիրոջ մրայ. Բեռնարդ իւր գրկին մէջ առաւ զինքը համբուրեց ու սկսաւ լալ :

Գամ շինողն սակայն Միգոտ գոչելով կը սուչէր, իսկ Մուսոնը՝ ոչխար դարձած ու իւր Բեռնարդ բարեկամին բարեկամը կրկին հանդիսացած՝ բնաւ տեղէն չէր շարժել : Գամ շինողը դուրս ելաւ, աբացիի հարուած մի առաւ շունին՝ նորա անհնազանդութիւնն պատժելու համար : Բեռնարդ գործաւորին այնպիսի բռնցիով մի պատասխանեց որ թմրեցուց մարդուն :

Որիչ գործաւորը ևս դուրս ելան իրենց ընկերը պաշտպանելու համար. կըսուի մի բրդաւ, պահապան գինւորը եկան, առին Բեռնարդին տարին ոստիկանութեան ուր անցուց նա այն գիշերը :

Հեռեկեալ օրը գնաց զամ շինողին խանութը. արուեստաւորը զինքը սպառնալից բնորոնեցաւ :

— Ես եկած չեմ կուր անելու, ասաց Բեռնարդ, ընդհակառակն եկել եմ ձեզ մէ ծառայութիւն մի խնդրելու. ես նախ և առաջ ներումն կը հայցեմ իմ երեկուան զայրացածիս համար. բայց այդ շունը իմն է : — Ի՞նչպէս, գոչեց բեռնարդը, այդ շունը ձերն է՞, ուրեմն զիս գո՞ղ կը կարծէք. Օհէ՛, Մարտիրոս, բա առջևդ չէ՞ր որ Մեղոսին համար ութ ֆրանս վճարեցի, պատրաստի փողով : — Պարոն, կրկնեց Բեռնարդ, չեմ ասել որ այդ շունը այսօրուան օրս ձերը չէ, քանի որ գնել ու փող վճարել էք. բայց առաջ իմն էր և ահա եկել եմ խնդրելու որ ինձ ծախէք :

Այսպէս խօսելով Բեռնարդ կը ջանար տեսնել զՄուսոն խանութին մէջ : — Ոչ, պատասխանեց զամ շինողը, Միգոտ իմ արուեստս լաւ գիտէ. այնչափ շուներէ վերջ որոց ի դուր ջանացի սուլորեցնել, առաջին շունն է որ սուլորեցաւ. նա ինձ համար յոյժ թանկագին է որ ես յօժարանամ ինձմէ հեռացնել :

Այդ միջոցին Բեռնարդ տեսաւ զՄուսոն որ մէկ անիւի մի քով կեցել էր ու կը դարձնէր զայն. խեղճ զինուորին սիրտը ճմլուեցաւ :

— Պարոն, ասաց, քսան ֆրանգ կուտամ ձեզի. — Ամենեւին, պատասխանեց արուեստաւորը, ես գնեցի զՄեդոս, և պիտի պահեմ. մէյմ'ալ որ չեմ ուզել զրկուիլ այսպիսի պիտանի կենդանիէ մի ծախելով զայն այնպիսի մարդու որ երէկ մազ մնաց զիս պիտի սպանանէր :

— Շատ կը ցաւիմ հանդիպած դէպքին, բայց գուր նախ սկսաք. — Ի՞նչ, միթէ ես ձեր վրայ յարձակեցայ. նշմարած չէի զձեզ մինչև անգամ, երբ անասունի պէս վրաս յարձակեցաք. — Դուք Մուսոնին օտքով զարկիք. — Իրաւունք ունէի ուղղել շունս որ սուլած ժամանակս չի գալ. — Ո՛հ, ասաց զինուորը, տարի մի կայ որ տեսնուած չէինք :

Մուսոն աղիողորմ ձայնով գոչեց .

Բեռնարդ ուզեց խանութը մտնել, զամ շինողը թող չտուաւ. զինուորը սրղմեց իւր բռունցքը բայց ինք իրեն զպոցեց. — Ատուած իմ, ի՞նչ եղել է Մուսոնին. — Անշուշա զձեզ տեսել է, կանգնել է ու պատժոյ արժանացել է :

— Պարոն, գոչեց Բեռնարդ, քսան հինգ ֆրանգ կուտամ. բոլոր ունեցածս է. մուրալով ես պիտի դառնամ, բայց հոգ չէ եթէ Մուսոն հետս լինի : Առէք ահա քսանհինգ ֆրանգը, կ'աղաչեմ :

Գործաւորը տարտամեցաւ. Բեռնարդ շունչ չէր առնուլ, սակայն սիրտին յաղթելով ասաց. — Ոչ, Մեդոս ինձ օգտակար է, ես զինքը գնեցի առի, քովս պիտի պահեմ. եթէ հարիւր ֆրանգ ևս տալու լինիր ձերը լինելու չէ :

Բեռնարդ ուզեց խօսիլ. միւս գործաւորները վրայ հասան ու վռնտեցին զինքը : Հետեւեալ օրը դարձեալ եկաւ խանութին առջև թափառելու. Մուսոնի կեղծքիչ ձայնն նորէն լսուեցաւ, բայց այս անգամ պատճառն ակն յայտնի իմացաւ : Շունը իւր սիրով ճանչնալով կանգնել էր գործէն, անիւր ման չէր գալ. ու գործաւորն՝ ընդհատեալ իւր գործէն՝ կնկել էր շունին կրակին մէջ կարմրեցուցած երկաթով մի. Մուսոն նորէն սկսել էր դարձնել անիւր, Բեռնարդ կրկին ուզեց մտնել խանութը, Մուսոն դարձեալ կանգնեցաւ ու երկրորդ անգամ երբ կարմիր երկաթով խթեցին՝ շունը սկսաւ իւր գործը շարունակել :

Բեռնարդ հեռացաւ գնաց, սիրտը էրած. չէր կարող զամ շինողին խանութին առջևէն անցնիլ, քանզի Մուսոնին ստացած անգութ մէքքերուն պատճառ էր : Հետեւեալ օրը չերեցաւ :

— Եւ վերջը՞ . — մէյմ'ալ զինքը չտեսան. — Ուրեմն գո՛ւնը վերադարձաւ. Ոչ ևս. բնաւ. և ոչ որ իմացաւ նորա վերայ տեղեկութիւն. ամենեւին չեն գիտել թէ ինչ եղաւ նա :

Արիստոս կարր

Թարգ. Մ. Ռ. Թիմինճեան